ՄԵՐ ԱՊԱԳԱՆ
Կրթամշակութային
բարեգործական հիմնադրամ
merapagan@gmail.com

НАШЕ БУДУЩЕЕ
Образовательно-культурный
благотворительный фонд
merapagan@gmail.com

№ 8 առ 29.11.2024 թ.

Մեղրի համայնքի ղեկավար
Խաչատուր Անդրեասյանին

Հարգելի՛ պարոն Անդրեասյան,

«Մեր ապագան» կրթամշակութային, բարեգործական հիմնադրամը՝ ի դեմս Գործադիր տնօրեն Վահրամ Կարապետյանի, Ձեզ է դիմում համատեղ աշխատանքի առաջարկով, որի շրջանակներում մեր կազմակերպությունը պլանավորում է Մեղրի համայնքի երեխաների և պատանիների համար ստեղծել «Ռուսական Կենտրոն», որտեղ սաներին հնարավորություն կընձեռվի անվճար հիմունքներով ուսանել ռուսաց լեզու և գրականություն, պատմություն, կերպարվեստ, երգ ու պար, մասնակցել այլ կրթամշակութային միջոցառումների՝ ուղղված հայ-ռուսական բարեկամության ամրապնդմանը: Դասընթացները անց են կացվելու անընդմեջ, երկամսյա ժամկետներով՝ խմբեր ձևավորելու հիմքով:

Հարկ եմ համարում նշել, որ նմանատիպ «Ռուսական Կենտրոններ», մեծ հաջողություններ գրանցելով, գործում են Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում:

Վերոհիշյալ նպատակը իրականացնելու համար խնդրում ենք Ձեզ աջակցել և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել՝ ք. Մեղրի, Ադելյան 3 հասցեում գտնվող «Մեղրիի մարզամշակույթային կենտրոն»-ի շենքի 3-րդ հարկում գտնվող տարածքը՝ «Ռուսական Կենտրոն» ձևավորելու և կրթական ծրագրերը մեկնարկելու համար:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ մեր կողմից կատարված տարածքի անբաժանելի մաս կազմող ներդրումները հետագայում սեփականության իրավունքով կհանձնվեն Մեղրի համայնքին: Բացի այդ նշենք, որ տարածքի բոլոր կոմունալ վարձերը վճարվելու են մեր հիմնադրամի կողմից:

Տարածքը խնդրում ենք տրամադրել 10 (տասը) տարի ժամկետով, հետագայում երկարաձգելու պայմանով:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Վահրամ Կարապետյան**

Է. Գ. Գևորգյան
+37491829829